

եթէ ոչ Հոգ. : ԵՆԼՔԷՆԷ պուլուտ կիրմիչ եւ տէրեա մուրտար օլմազ :

Այլ եթէ զգաստասցիս՝ պարգեւաց Տեառն լիցիս արժանաւոր, եթէ ոչ՝ վրէժխնդիր քեզ Աստուած :

(Ձեռ. Թիւ 1059, քղ. 67բ-68ա)

### (Թուղթ մխիթարութեան առ անծանօթ ոմն)

[Տէրն] մեր Քրիստոս ըստ մեծի եւ անճառելի խոնարհութեան իւրոյ, որ ի կերպարանս Աստուծոյ էր՝ զկերպարանս ծառայի էառ եւ անբաւ մարդասիրութեամբ իւրով եցոյց մարդկան ազգի զփրկագործութիւն անօրէնութեան իւրոյ ծանուցանելով զԱստուած Հայր, ըստ այնմ թէ Որդւոյն ծանեաք զՀայր : Եւ զնոյն ճանապարհ ճշմարտութեան եցոյց աշակերտելոցս՝ ուղղելով զգնացս մեր յերկինս ասելով. Դուք չէք յաշխարհէ աստի, որպէս եւ ես չեմ յաշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էիք՝ աշխարհ սիրէր զձեզ արդեօք եւայլն : Եւ թէ խոստանայր նոցա զկեանսն յաւիտենականս թէ Ոչ (որպէս) աշխարհս տայ տամ ես ձեզ. մի՛ խռովեսցին սիրտք ձեր եւ մի զանգիտացին : Եւ ի արտնջել ոմանց երբեմն եւ դառնալն ի Քրիստոսէ, Տէրն ասէր. Միթէ եւ դ՞ուք կամիցիք երթալ. պատասխանէր Պետրոս. Տէ՛ր, առ ո՞վ<sup>1)</sup> երթիցուք, բանս կենաց յաւիտենականաց ունիս : Յիշեցէ՛ք եւ զայն՝ որ մեծատունն եկեալ ասէր. Զամենայն օրէնսն պահեցի, եւ արդ որո՞վ իցեմ պակաս. պատասխանէ

1) այլ յո՞վ.